

Երկաթագործը դարձեալ իշխանի մը պէս ապրեցաւ, և Աղքատութիւնն ալ իշխանի շան մը պէս։ Մէկը Պոհեմիայի բիւրեղեայ գաւաթով մը կը իւրմէր, միւսը արծաթէ սկուտեղի մը մէջ կը լափէր, և ձմեռը բնական մարդու պէս հաստ բրդոտ զգեստ մը կը հագնէր։ Բայց մարդս ամէն բանէ կը ձանձրանայ, նոյն իսկ երջանկութենէն։ Թշուառութիւնը մեռնիլ ուզեց։ Քիչ մը նեղութիւն իմանալով, կանչել տուաւ տեղոյն ամենէն վարպետ բժիշկը, որ բընաւ հիւանդ մը չէր առողջացներ, և շուտով իրեն հանդերձեալ աշխարհին անցագիրները ստորագրեց։ Երկաթագործը մեռնելով՝ հանդարտ հանդարտ գնաց հաւատարիմ շանը հետ որ մէկտեղ ուզեր էր գալ, ու արքայութեան դուռը զարկաւ։ Դժբաղդաբար բանալեկիր Առաքելոյն յիշողութիւնը սուրէ։ Երբոր տեսաւ այն մարդը որ իր խորհուրդները արհամարհներ էր, ըստ մոմուալով։

— Պնդագլուխ ծեր, երկինքը ընտրելու միջոցն ունեցար և խօսքիս մտիկ չըրիր։ Ներս պիտի շմտնաս, ես եմ որ կ'ըսեմ։

Եւ առանց աւելի երկընցընելու դուռը երեսին վրայ գոյեց։

Այս յառաջաբանին շատ չհաւնեցաւ Թշուառութիւնը, բայց ստիպուած հըպատակելով՝ գնաց քաւարան։

— Խղճմտանքդ ծանրացուցած չես պղտի մեղքերով, ըսին իրեն դուռը հասնելէն առաջ, հոս քեզի համար տեղ չկայ։

— Ուրեմն ինծի դժոխքը մնաց, ըստ հառաջելով Թշուառութիւնը։

Սադայէլի պալատին առջևն հասնելով, զանգակը քաշեց և խեղճ սատանայ մը որ տառեխ ձկան պէս չորչրուկ էր և գոնապանութեան պաշտօնը կը կատարէր, բացաւ պղտիկ պատուհան մը և ճանչցաւ որ այն սարսափելի եր-


կաթագործն էր որ այնպէս տափկեցուցած էր զինքը։ կռնակի վրայ ինկաւ։ պոռալով իր ընկերներուն որ չըլլայ թէ դրան դպչին, վասն զի զանգակ զարնողը թշուառութիւնն էր։ Ոչ ոք համարձակեցաւ ոտք մը առաջ առնելու, և դժբաղդ դարբինը երկայն ատեն ըսպասելէն ետքը պէտք եղաւ որ ետ դառնայ հաւատարիմ շանը հետ։

Ասոր համար է որ Թշուառութիւնն և Աղքատութիւնն միշտ այս աշխարհքիս մէջ են։

ՎԻԿՏՈՐ ԳՈՒԶԻՆ

Պէտք է փութալ վախճանելոց պատիւ ընծայելու, վասն զի անհամբեր և նախանձոտ քննադատութիւնը դազանաբար որսի մը կը սպասէ, մանաւանդ թէ առանց սպասելու կ'աղարտէ դեռ ևս հազիւ ցրտացեալ աճիւնները՝ մեծ բանի մը կյնալը տեսնելու ուրախութենէն։ Սակայն եթէ երբէք եղած է մարդ մը որ անխատիր ամէն աստիճանէ և ամէն կարծիքէ անձինք շարժէ ՚ի զարմացումն և ՚ի մեծարանս, նոյն իսկ իրեն թշնամիները, անշուշտ գուզէնն է։ անոր համար անկողմնասէր կենսագրի մը առաջին և զիսաւոր փոյթն պիտոր ըլլայ կոյր հիացման մը ձեռք գերի չըմատնուիլ, հասարակաց պատուով և պաշտամամբ փառաւորեալ կուռքը մերկացընել իրեն պաճուճանկներէն, և նուազագոյն ու երկրորդական սեպուած հանգամանաց մէջ ալ երենալ ոչ թէ պայծառութենէ ու փառքէ շացող մանուկ տղայ մը, այլ պաղարիւն և անցնոր ծեր մը որ ամէն բանի խորը զիտէ, ըսել կ'ուզեմ՝ ունայնութիւնը։

Երբ կը տեսնանք որ յանկարծակի, մի և նոյն ժամուն, մի և նոյն օրը, այս տխուր ժամանակներս, գաղղիոյ գեղարուեստքը փիլիսոփայութիւնը և գեղեցիկ դպրութիւնքը, որ արդէն այնչափ մեծ համբաւներու շիջմանը սուդին մէջն էին՝ կրկնակի և անդարման կո-



Արկադի Գուգան

բուստ մը կ'ընեն՝ զրկուելով միանգաւ-
մայն իրենց պլատոնեան գուղէնէն և
ապելեան, էնկրը (Ingres) նկարչէն, ինչ
պէտք է մտածենք, բայց եթէ որպիսի
սոսկալի բեռ կը թողուն այս հոյակապ
մեռեալները կենդանի մնացողաց շա-
լակը: Մինչդեռ հետզհետէ վրայէ վրայ
կ'ինան այն ամէն պատկերները որ դա-
րուս որրոցը պայծառացուցին, հետ-
զհետէ կ'աւելնայ և կը ծանրանայ ի-
րենց յաջորդող սերնդոց պատասխա-
նատուութիւնը. վարժած ըլլալով այս
մարդիկս մեր հիացման նիւթ առնելու
և իրենց պաշտպանութեն թեոցը տակ
զարդանալու, տրտմութեամբ կը նկա-
տենք առջևնիս բացուած դատարկ տե-
ղերը: Երանի որոնց որ այս դատարկ
տեղերը պիտի մատակարարեն իրենց
սեփական փառաց յաջողութիւնը կամ
ապագայ իշխանութեան մը ապահո-
վութիւնը. յուսանք հետերնին որ հան-
գուցելոց տեղը լեցընելու կարող պիտի
ըլլան:

Ուրեմն վիկտոր Գուղէն ալ պիտի
անհետանար, Գուղէն զոր մէկը ճշմար-
տապէս կրնար յանմահից կարգի դը-
նել. այնչափ շատ էր իր կենսական հիւ-
թը և կորովը: Անսպառ երիտասարդու-
թիւնը թէ կը զարմացընէր և թէ կը
զմայլեցընէր իրեն մօտեցողները. մըշ-
տալոյց վառարան մը կ'ոգեորէր այս
պնդակազմ անձս. մարմնով և մտօք
հրեղէն բնութիւն մ'էր. եթէ մահը ու-
զած ըլլար յամրաշարժ և կամաց կա-
մաց կրծող հիւանդութեամբ մը իրեն
կենաց թելը կտրել, Գուղէն անտարա-
կոյս կը յաղթէր մահուան ինչպէս այն-
չափ անգամ յաղթած է: Աս տեսակ
բնութեան մարդիկը չեն կրնար շիթ առ-
չիթ կորսնցընել կեանքերնին, այլ մէկ
հարուածով կ'ինան: Այս բնական ամ-
րութիւնը աւելի ներքին բանի մը՝ հո-
գւոյ մը ամրութեանը նշանակ և բա-
ցայայտութիւն էր, զոր հրաբորոք ե-
րևակայութիւն մը անդադար կը մղէր
բոլորովին իրարմէ զանազան առարկա-
ներու, բայց ասանկ արտաքոյ կարգի
յողգողութեան մը հետ կը խառնէր

նաև անճնշելի պնդութիւն մը, աննը-
կուն կամք մը՝ իմաստութեամբ յղա-
ցած մոտածութիւնները յարդիւնս ածե-
լու համար: Ներուի յանդուգն զուր-
ցուածքիս՝ Գուղէն խռովութեան սա-
լին վրայ գարբնուած էր. 92ին ծնած,
Բարիզու մէջ, ժամագործի մը զաւակ՝
նման թ.-թ. Ռուսոյի, ժողովրդէն ժա-
անգած էր բարակութիւնը, զուար-
թութիւնը, կիրքը, անխորհրդածու-
թիւնը. իսկ խռովութենէն ստացած
էր տեսակ մը բռնութիւն, համարձակ
ընտանութիւն մը, և այն վարդապետու-
թիւններ և կարծիք ծաւալելու ոգին որ
մեր ժամանակին առաջին զպրոցահայր
ըրած է զինքը: Այնպէս յորդ և առատ
էր զինքը բռընկցընող կրակը որ ամէն
մօտը գացողներուն վրայ կը սփռուէր,
ինչուան նաև հետը կոռողներուն: իր
հրապարակաւ պերճախօսութիւնը, կ'ը-
սեն. որոնք որ իրեն մտիկ ընելու բաղդն
ունեցած են, անդուգական բան մ'էր.
ոչ ինչ պակաս էր նաև իրեն առտնին
պերճախօսութիւնն ալ: Անհատնում
առատութիւն մը, չնորհքով և չարաճը-
ճիւթեամբ լի աշխոյժ մը, յիշողու-
թեան ճոխութիւն, արթնութիւն տե-
սութեանց, շարժմանց մեծութիւն, և
աւելցուր ասոնց վրայ սքանչելի զլուխ
մը և վառվռուն ջուխտակ աչուըներ,
որոնցմէ ոգին հեղեղի պէս կը զեղա-
նէր, այսպիսի ոմն էր Գուղէն իր ներ-
քին կենացը մէջ և այսպէս պէտք է նը-
կատել զինքը, եթէ մէկը ճշդիւ ուզե-
նայ իմանալ թէ ինչ մեծ տեղ բռնած
էր մեր դարուն մէջ և որշափ շնկոց
հանած էր իրեն անունը:

Գուղէնի դասերուն մտիկ ընողը կըր-
նար կարծել որ բնութիւնը զինքը ըս-
տեղծելուն ժամանակը երկայն ատեն
տարակուած ըլլայ թէ բանաստեղծ
մը շինէ չէ նէ փիլիսոփայ: Պատանին
վիկտոր երևակայութեան կենդանի ըմ-
բռունմունքներովը ամենէն աղուոր բա-
նաստեղծութեան հովիտները կը ճե-
մէր, իսկ ուսման և տրամարանութեան
անչափ յօժարութեամբը՝ փիլիսոփայու-
թեան ամենէն բարձր գաւառները կը

վերանար : Թերեւս առանց իսկ ուզելուն՝ Պլատոնի սերտ և դիւթեալ աշակերտ մը եղած էր . մատղաշ հասակէն պարարտաղբիւրներու ծորանքներովս սկըսաւ արբենալ . կիկերոնի չափ կը ճանչնար Աթենասայ քաղաքը , և կրնար մանրամասնաբար պատմել քեզի Լիկէնի և ձեմարանի հոչակաւոր վարժարանները : Յետ այնչափ դարերու ականջները կը հնչէին մեծամեծ իմաստափրաց դասերովը , և թափառական մեղուին նման ամէն ծաղկըներէ մեղը հաւաքելով՝ բովանդակ փիլիսոփայութիւն մը կը կատարէր : Գուղէն գիտէր ընտրել . իրեն դասերը գերազանց ճարտարութեամբ կը բաղադրէր այնչափ այլ և այլ իմաստութիւններէ , և սխրացեալ աշխարհք իրեն հաճոյք մ'ընելու համար նոր բառ մը կը ստեղծէր . ընտրական փիլիսոփայուրիշն (philosophie électique) : Երջանիկ երիտասարդ . կ'ընդունէր և մանաւանդ թէ ընդունել կու տար փիլիսոփայութեան բոլոր այս յեղափոխմունքները ամենէն առելի ըմբոստ ոգիներուն . մէկ զրչի շարժուածքով և իբր թէ զբօսանաց համար կ'աւրէր իր նախորդներուն վարդապետուները , գոնստորսէն ալ գոնստիյեագէն ալ շատ չպատկառելով . « Թողունք որ խօսի բանաստեղծը » , կ'ըսէին փիլիսոփայք անուշ քմծիծաղով մը . « մտիկ ընենք փիլիսոփային » , կ'ըսէին բանաստեղծները . « անդերնին մնան հիները » , կ'ըսէր նորարդյս երիտասարդութիւնը , և դէպ ՚ի յաւիտենականութիւն խոնարհեալ աղջը՝ սաստիկ հետաքրքրութիւն մը կը զգար մառախլապատ ամպին մէջ : Իսկ պատանի վարժապետը կ'անցնէր ժրութեամբ և թեթեութեներկու անդունդներուն մէջէն , և լսելու բան էր այնչափ քաջութեան և գեղեցիկ ոգւոյ տրուած խիտ առ խիտ ծափահարութիւնները : Իր պերճախօսիկ աթուոյն վրայէն ամէն ըսել ուզածը կ'ըսէր , ու նաև քիչ մ'աւելի . և ստոյգէ որ նոյն իսկ իրեն ուսուցիչները դրուածած են իր անկախութիւնը :

Գրեթէ տղայութիւն չունեցաւ , գու-

նէ ոչ ոք կը յիշէ որ զինքը գպրոցի մէջ ուսանող աեսած ըլլայ : Կանոնաւոր Դպրոցին ¹ մէջ սկսաւ իր վարժապետութիւնը , այնպիսի հասակի մը մէջ յորում շատք և շատերը դեռ սորմելու ետևէ են , 1810ին իբրև աշակերտ հօնտեղ մոնելէն վերջը : 1812էն ինչուան 1814 դասուց երկրորդից եղաւ , ու շատ անգամ մատենագրութեան ճիւղին մէջ Վիլմէնի տեղը բռնեց , որ յետոյ իրեն աթուակից եղաւ 'ի Սորբոն և 'ի ձեմարանն : Ասանկով ԺԹ դարուն գաղղիական փիլիսոփայութեան հայրը սկսաւ լսութիւն ոտանաւորներու դասերը կըրկնել . սակայն փիլիսոփայութիւնը բոլորովին իրեն գրաւեց Գուղէնի միտքը առ ոստ Ռուայէ-Գոլառի , որ խիստ և բացարձակ բնութեան մը տէր մարդէր , պերճախօս բայց երկրաչափական պերճախօսութեամբ , մտածող և հակածառող , հազիւ ճանչցուած ան ատենը , և որուն վրայ ցայտեց ետքէն իր երեելի աշակերտին փառքը : 1815ի դիպուածները հասարակաց կրթութեան պաշտաման կոչելով զ՛յուայէ-Գոլառ , Գուղէն կանոնաւոր Դպրոցէն անցաւ Դպրութեանց Վարժոցը (Faculté des Lettres) , և հոն փլիկած հին մատրան մը պատերուն մէջ բացաւ այն ինչ քըսաներեքամեայ՝ փիլիսոփայութեան հասարակաց վարժապետի ասպարէզը՝ այնպիսի յաջողութեամբ որ առջի օրուընէն 'ի վեր փառաւոր եղաւ : Բայց խիստ անձուկ գալով խուռնընթաց ունկնդիրներուն ամբոխին համար Դրաբրութեանց Վարժոցին լսարանը՝ հարկ եղաւ որ Սորբոնի ընդարձակ սրահները բացուին իմաստափրիս առջի . գործ մը որ արդէն իսկ բաւական մեծ գութիւն է :

Եթէ աւանդութեան հաւատանք , Գուղէն դաղղիոյ ամենէն մեծ վարժապետը եղած է , դէթ երբոր դասատութեան հանճարը պերճախօսութեան մեծութենէն ուզենանք չափել :

¹ Կանոնաւոր Դպրոցը (l'École Normale) մատենագրութեան և գիտութեանց դասատուներ հանելու համար հաստատուած է :

իր խօսքին, շարժմանցը և նայուածքին զօրութիւնը այնպէս էր՝ որ ունկնդիրները կը հմայէր. մարդարէական բան մ'ունէր. և եթէ իւր ողջամիտ իմացողութիւնը և բնական նրբութիւնը հակաքարչ չըլլային իր եռանդեանը և աշխուժից թափերուն, այնպիսի ժամանակ մը յորում այնչափ հողիներ նոր կրօնք մը գտնալու ետևէ ինկած էին՝ ինքը միայն կրնար ըլլալ նոյն կրօնից քահանայապետը, ինչպէս եղան ժամանակակիցներէն ոմանք : Գաղափարախօսաց դպրոցը որ սովորեալ էր Գոնտիյեադեայ վերացեալ լեզուին և գրահաշուական դրութեանը, բան մը չէր հասկընար այն խանդակից և կրակոտ լեզուէն : Մի և նոյն ժամանակ կը ջանար կոռուիլ ամենէն աւելի չոր և միմին նիւթերու հետ . անով է որ ինքն առաջին անգամ գաղղիացի ունկնդիրներու դիմացը դրաւ Քանդի խոր և վերաշուական փիլիսոփայութիւնը, և գիրկընդիմառն ոգորեցաւ Լոքի ծանր և ցուրտ փիլիսոփայութեանը հետ, որ չիրնար բնաւ մարդուս պերճախօսութիւնը շարժել : Գուղէնի վախճանն էր նոր փիլիսոփայութիւն մը հաստատել զգայապաշտ գաղափարախօսութեան աւերակներու վրայ՝ գերմանական նոր փիլիսոփայութեան հետ աջակցելով, որ ան ատեն քիչ ճանչցուած էր Գաղղիա :

Աներելի մնուացութիւն մը կըլլար 1828ի յիշատակաց արժանաւոր զաստութիւնը չյիշելնիս, որ մեր ժամանակուան մատենագրութեն և պատմութեան պայծառագոյն կէտերէն մէկն է : Ութը տարուընէ 'ի վեր Գուղէն և կիզոյ դատապարտուած էին անգութե անիրաւ լուութեան մը՝ վերականգնըման¹ կասկածաւոր և յետախաղաց քաղաքագիտութենէն, 1828ին վիլլէլի պաշտօնատունը տապալելով տեղն անցաւ Մարդինեադ որ աւելի պատական էր . նոր պաշտօնէին առաջին գործքե-

րէն մէկն եղաւ բռնի պապա ժապետներուն խօսելու համարձակութ տալը : Գուղէն շատ անգամ պատմած է այս դէպքս . ապրիլ ամսուան մէջն էին, և ոչ ինքը ոչ անուանի կարգակիցը պատրաստութիւն ունէին այնպիսի ծանրակշխու ուսուցչութեան մը . ուրիշ կողմանէ քիչ ժամանակ կար, հազիւթէ երկու երեք ամիս : Երկու վարժապետները պահ մը տատամսեցան . մըտածեցին որ միւս տարուան ձգեն իրենց գասախօսութեան բացումը, բայց ովկ կրնար ապահովցընել որ ինչուան ան ատեն ազատական մակրնթացութիւնը կը մնար . պէտք չէր ընդ հակառակն օգտուիլ այն նպաստաւոր վայրկենէն և չնորհեալ ազատութիւնը վայելել քանի որ նորէն չէր յափշտակուած : Գուղէն և կիզոյ այսպէս մտածելով չուզեցին ուշացընել իրենց դասախօսութիւնը, և յանդգնեցան յանպատրաստից գրուածքներու ձեռք զարնել որ իրենց գիւրին բան մ'էր, նախնական ուսմանց մէջ խորամուտ եղած ըլլանուն պատճառաւ . այս յանդգնութենէն մեզի երկու գեղեցիկ գիրքեր ծնան . կիզոյի Պատմութիւն բաղաքականութեան յերոպա և Գուղէնի Ներաճութիւն պատմութեան փիլիսոփայութեան : Նոյն ատենները ուրիշ վարժապետ մըն ալ, որուն իւրաքանչիւր գասերը մէջմէկ միցանակի իրաւունք ունէին, կը սկսէր իր գաղղիական մատենագրութեան դասական նընկարագիրը յեօթնետասներորդ գարու :

Անհնարին բան է որ այս օր կարենանք այն պայծառագութեան և յուզմանց գաղափարն ունենալ զոր պատճառեցին Գաղղիոյ և նոյն իսկ Եւրոպայի այս ուսումնական եռապետները, որոնցմով արդի բովանդակ գաղափարները կը սպրիդէին առաջին անգամ հասարակաց լարաններու մէջ և կը ծաւալէին ամենէն աւելի պաճուճարան և եռանդուն ձայներով : Ենթանին անգամ կէօթէ կը խանդաղապաէր իր շքեղ առանձնութեանը մէջ . կը գովէր այն երիտասարդ աղատութիւնը, այն մնուաց աղ-

¹ Գաղղիոյ պատմութեն մէջ Վերականգնում (Restauration) կը կոչուի Պուրապոններուն կրկն դահակալութեան ժամանակը, երբոր թագաւորեց Լուդովիկոս ԺԷ :

ամարձակութիւնները, այն քսսադատութե գեղեցիկ նորութիւնները։ Եւրոպա կը տեսնար յայնմանոր դարու մը երևոյթը և նշանը. երջանիկ և միակ վայրկեան մ'եղաւ յորում ամէնքը կարծեցին թէ անցեալը և ապագայն իրարու ձեռք տալով պիտի հաշտուէին անձնանութիւննեան հասարակ ոգւով մը. իւրաքանչիւրոց ուրախութիւնը և յոյսը կ'աւելցընէր վարժապետաց պերճախօսութիւնը և ժողովրդեան վստահութիւնը. երազ մ'եղաւ. բայց աս երազէն ձեռուընիս երեք գեղեցիկ գիրքեր մնացին. իիզոյի, վիլմէնի և գուզէնի ամէն մէկ դասը մերձակայից հոգւոյն վրայ նոյն արդիւնքը կ'ընէր ինչ որ վառուած կանթեղ մը ցորենի որայններուն վրայ կ'ընէ. իիզոյ կը պատմէր բերանաբաց պատանիններուն այն անկորստական քաղաքականութեան յառաջադիմութիւնը որ կ'երթայ անդադար և անկատարած հետզետէ մեծնալով. իր խօսքը կարճ և փառաւոր էր և նոյն իսկ աղաջանքը հրամայելու կերպ մ'ունէր. վիլմէն, անձնաւորեալ պերճախօսութիւնը, երեք մեծամեծ դարերու հանճարովը և չնչովն ոգեորած, գունդագունդ երիտասարդաց ալէւէտ բազմութեանը կը խօսէր մերթ Հոմերի և մերթ Վիրզիլի վրայ, մերթ Արևելից և Արևմտից եկեղեցիններուն վրայ, այսօր Ս. Օգոստինոսը և վաղը Ուկերերանն հանդիսացընելով. իրարու ետևէ կը յիշէր զիտասին և զգունէյ վէրսայեի զղեկին մէջ, զՊոսիւէ երկնային ամպիոնովը և զՄիրապոյ ՚ի Սահմանադրական ժողովին. լսողը կը հիանար և կը յափրշտակուէր. Բայց երկրորդ օրը երբ կարգը գուզէնի գալով ՚ի շառաչիւն բիւրաւոր ծափահարութեանց կը լսեցընէր այն սրահին մէջ աղաղակ մը, որ կապերէն և պատանքներէն ազատեալ մարդկային ոգւոյն անկախութեամբը և մեծութեամբքը լեցուած էր, այն ատենուան խանդը և բորբոքումը չստորգրուիր. Ասոնք մեծամեծ օրեր էին զորոնք չիկրնար մոռնալ գուզէնի աշ-

կերտներէն մէկը. յիրաւի երեք վարժապետներն ալ հաւասար պատիւ և մեծարանք կ'ընդունէին, բայց թերես գուզէն աւելի ցանկալի էր. Այս ներողամիտ վարժապետիս դպրոցին մէջ սորվեր էին դեռահասակ համբակները որ Պլատոն մեծ իմաստուն մ'էր, և գոհը ըլլալով կը սորվէին Պլատոնի զրուածքները. Գուզէնի թարգմանութեան մէջ: Զեռնարկութիւնը մեծ էր, և քիչ անգամ երկու տարուան միջոց մէկ հատորէն աւելի գուրս կ'ելլէր. բայց այս երիտասարդները ապրուստնին գտնալու համար ինչպիսի աշխատութեանց ալ զբաղեալ ըլլային, միշտ հետերնին կը կրէին իրենց վարժապետին Պլատոնը. և զարմանալի բան է, որ քսան տարուան մէջ գրուած զիրք մը իր առաջին ընկերագիրներէն մէկն ալ կորսընցուցած չըլլայ. այնպէս պատուական էր այս թարգմանութիւնս բնադրին հաւատարմութեամբը և լուսաբանութեանց պերճախօս չնորհքովը:

Խօսքերնիս շատ կ'երկըննար եթէ մի առ մի յիշէինք 1829ին գասախօսութիւնները, որ բովանդակութիւն եղան փիլիսոփայութեան ամբողջ պատմութեանը և գուզէնի սիրելագոյն զիրքերէն մէկը, որուն վրայ շատ աշխատեցաւ և որուն պարտըկան է իր փառաց մեծագոյն մասը. այն է Ընդհանուր պատմութիւնն իիլիսոփայութեան. 1830ին խօսածները, որոնցմէ ելաւ իրեն գրուածոց ամենէն աւելի հաստատունը և գիտնականօրէն շարագրուածը, Քննութիւնն իիլիսոփայութեան լորի. Ետ գառնալով կրնայինք խօսիլ նաև 1818ին գասախօսութեանը վրայ որ սկիզբն եղաւ իր Յաղագս Ճամարտին, գեղեցկին և Բարոյն անուանի գրքին. և 1820ին գասերուն՝ որոնցմէ ձեւացաւ Քանդի փիլիսոփայութեան վրայ գրածը. Այլ այլ գասերուն յարգը աղէկ ճանչ նալու համար պէտք է վերանալ մտզի իրենց գրութեան ժամանակը. որչափ գաղափարներ որ հիմա ամենուս ստացուած եղած են, ան ատեն նոր, յան-

դուգն և հրապուրիչ էին . կ'արհամար հենք զանոնք , վասն զի մերը եղած են , վասն զի մեր միտքը կրթած են . մեր սեփական ամլութիւնը իրենց վրայ կը ձգենք , և կը նարով նորանոր մոածութիւններ գտնալ՝ զուր կ'ամբաստանենք որ նոր չեն . ապերախտ և միանգամայն նախանձոտ՝ կը ջանանք յափշտակել մեր նախորդներուն փառքը և իշխանութիւնը և մեր չափաւորութիւնը կը միթարուի թշնամաներով զիրենք :

Գուղէնի փիլիսոփայութեանը և վարդապետութեանցը գալով՝ միաբերան վկայուած է որ փիլիսոփայութեան մէջ երկու արդիւնք ունեցած է , մէյմը գաղղոյ մէջ փիլիսոփայութեան պատմութիւնը հիմնելուն և մէյմ'ալ յիսուն տարուան միջոց անընկճելի զօրութք մը փառաւորած և պաշտպանած ըլլալուն համար ոգեկան գաղափարը : Իր հետաքնին մտաց խուզողութեանցը մէջ , որով այլ և այլ ատեն պտըտեցաւ Սկովտիայէն գերմանիա և Աթենքէն Ալեքսանդրիա , ու վերջապէս հանգչեցաւ եօթնետաներորդ դարուն գաղղիական իմաստասիրութեանը վրայ , պէտք է ճանչնալ ոգեկան գաղափարը երբն իրեն մշտատե կապ և գերագոյն գաղափար : Բանին և զգացմանց զանազանութիւնը , հոգին որ ազատ ոյժ մըն է տարբեր 'ի մարմնոյն , պարաւոց օրէնքը , իրաւոնքը՝ բարոյական ազատութեան վրայ հիմնուած , վերջապէս քաղաքական ազատութիւնը որ իր մըտքին մէջ անբաժանելի կերպով միացեալ էր ոգեկանութեան հետ . միով բանիւ Յ . Յ . Ռուսոյի աստուածականութիւնը (déisme) աւելի գիտնաբար բացարուած՝ Պլատոնի , Տէգարդի և Քանդի աշակերտէ մը , այս է գուղէնի վարդապետութիւնը , զոր ոչ երբէք գաղրեցաւ ջատագովելէն 1815էն և 1812էն սկսեալ ինչուան կենացը վերջին օրերը , երբոր կը կարդար ծեմարանին մէջ իր ընդհանուր Պատմութիւն փիլիսոփայութեան գրքին պերճախօս վերջաբանութիւն մը , դրոշմեալ այս ազնուական գաղափարներով :

« Զեմ կեղծեր անդիտանալ կամ մոռնալ , կ'ըսէ Պ . Պոլոս Ժանէ (M. Paul Janet) գաղղիացին , որուն ընդհանրապէս կը հետևինք այս յօդուածիս մէջ , թէ ատեն մը գուղէնի փիլիսոփայութիւնը կասկածներ և ինչուան սաստիկ ամբաստանութիւն մը կրած չըլլայ թէ Շելլինկի և Հէկէլի գերմանական գաղափարականութեանը կը դիմէ . ամբաստանութեանս կրնամ պատասխանել թէ գերմանական փիլիսոփայութեան մէջ ամէն բան արհամարհելի ինչպէս շատերը կը կարծեն , և ըստ իս գուղէնի փառքերէն մէկն է առաջին անգամ՝ զգաղղիան գերմանիոյ իմաստասիրական մտածութեանց վարժեցնելլ : Ժամանակին կ'իյնայ ճշմարիաը սուտէն ընտրել այն բնազանցական ընդարձակ շինուածքին մէջ , զոր կանգնեցին Հոենոսէն անդին այնշափ մեծամեծ միտքեր , սկսեալ վանդէն ինչուան Հէկէլ . բայց թէ ամենայն ինչ սուտ , անշահ և բոլորովին անպատուղ ըլլայ այս ամբաւ մտածութեանց քանակին մէջ՝ չեմ ընդունիր : Նոյն իսկ գուղէն որ յետոյ կարծիքը փոխեց , այս փիլիսոփայական շրջանս համարած է միշտ իրբե մարդկութեան մեծագոյն շրջաններէն մէկը , և ինչուան վերջին օրը լսեցի բերնէն որ խառն մեծարանքով և հիացմամբ կը խօսէր Հէկէլի վրայ » : Գուղէն ամէն մարդէ աւելի զինուոր մանաւանդ թէ զօրավար մըն էր , վասն զի առջի օրուընէն 'ի վեր հրամայած է և չէ թէ հնազանդած : Փիլիսոփայութիւնը իրեն համար պատերազմ մըն էր , պատերազմ ուղիղ սկըզբանց ընդդէմ ծուռ սկզբունքներու , ճշմարտին ստոյն հետ , ընտիր ախորժակին գէշ ախորժակին հետ , միջասահման ազատութեան ինքնիշխանութեն և ուամկապետութեան ծայրայեղ շափազանցութեանցը հետ . համառօտ ըսեմ , անմահական ճշմարտութեանց պաշտպանութին էր , որ են ժառանդութիւն մարդկեղէն ազդի : Քանդի պէս գրութեան մը վրայ քառասուն տարի ըղեղը փորելու և առաջին գրուածքը

վաթսուն տարեկան հրատարակելու մարդ չէր. այս գերմանական դանդաղ շինութիւններէն կը խորշէր իր աշխոյժ, սթափ և եռանդուն բնութիւնը, և ահաւասիկ այս գործունէութեանը և պատերազմի սիրոյն մէջն է իր գրաւորական հանճարոյն գաղտնիքը: « Ոճը, կ'ըսէր, շարժումն է ». տեսութիւն՝ որ աղէկ կը պատշաճէր իր մտաց որպիսութեանը. մեծամեծ մատենագիրներուն վրայ ամենէն աւելի կը հաւնէր խօսքին դարձուածքին և յառաջխաղացութեանը քան թէ մասանց կատարելութեանը. կ'ուզէր որ մնքին յափրշտակութիւնը, ներքին հեղեղը խօսքին մէջ անցնի, և իր ոճը իրաւցընէ այս սկզբան բացատրութիւնն էր: Շարունակ ոյժ և շարժում մը, մեծաքայլ և սօս ընթացք մը, ասոնք էին ահաւասիկ իր գրութեան ամենէն աւելի աչքի զարնող նկարագիրները. ճարտասանի պէս կը գրէր. ենթազբելով որ դիմացը համոզելու կամ յաղթահարելու ոսոխ մ'ունի:

« Այս երեկի արհեստաւորիս ներքին աշխատութեանը ներկայ ըլլալուն պէս հետաքրքրական բան մը չէր կը. նար ըլլալ. — թողունք որ խօսքը շարունակէ Պ. Պ. Ժանէ. — ուրիշները ներշնչման կը սպասեն, իսկ ինքը անոր կը հրամայէր: Քանի քանի անգամ մեզի պէս խեղճ մատենագիրներու չհանդիպիր, որ երբ գրիչը ուղածնուս պէս առաջ չերթայ, երբ որ խանդը պակսի, մէկդի կը ձգենք աշխատութիւնը և լաւագոյն ժամուան կը սպասենք: Ոչ այսպէս և գուզէն. չէր ուզեր իրեն մուսային գերին ըլլալ, այլ կուզէր կառավարել զինքը: Շատ անգամ տեսած եմ որ նեղութեամբ բան մը կը փնտը. էր, խարխափելով, զայրանալով, և բան մը չգտնալով: Ոչ երբէք յուսահատութեամբ մէկդի կը քաշուէր, ոչ երբէք ուրիշ օրուան կը թողուր. յաղթելէն ետքը կը հանգչէր. իր սկզբունքն էր որ մէկը քանի որ աշխատանքէն գոհ չէ պէտք չէ ետք կենայ: Ամենէն աւելի մանր հանգամանաց մէջ զարմանալի

էր այս հրաշալի գրիչս: Մեր օրերուն մատենագրաց մէջ ոչ ոք իրմէ աղէկ կրնար գործածել խօսքերու երկայն պարբերութիւնը որ մեր արձակ լիցուին մեծ գեղեցկութիւններէն մէկն է, բայց նաև մեծ գժուարութիւններէն մէկը. գիտէր արձըկել, երկընցընել, ընդմիջել, նորէն բռնել և վար ձգել, ամանակաւ ու փառաւոր և ներդաշնակ անկամամբ մը: Յետոյ փորձեց նաև կարճ պարբերութիւնը որ ուրիշ գժուարութիւն մ'է և հոն ալ լիովին յաջողեցաւ . . . : Իբրև քննադատ՝ մեծ էր իրեն ախորժակը, և խիստ աղէկ կը զգար այրական և կորովի գեղեցկութիւնները. իր նախամեծար բանաստեղծը Գոռնէյ էր, իսկ արձակախօս մատենագիրը՝ Բասգալ: Առաջինը շատ աւելի վեր կը դասէր քան զիամային, և յամենայինի լաւ ևս կը յարգէր Ժէ դարուն առաջին կիսոյն ազատ և համարձակ կերպը քան թէ երկրորդ կիսոյն բոլորովին դասական ոճը »:

Երբ իրեն փիլիսոփայութիւնը ինչ որ ըսեկիք ունէր ըսաւ լմնցուց և հրաժարեցաւ անլուելի կուտէն. ընտրեց խումբ մը գեղանի համբաւեալ կնիկներու, որոնք հետզհետէ գաղղիոյ արքունեաց հոգը և զարդն եղան, և պճնեց զիրենք իր խօսքին բովանդակ չնորհքներովը: Ասոնց համար ուշակալ հայր մը և երբեմն ինչուան պարկեշտ սիրահար մ'եղաւ. իր ողջամիտ և անյողդողդ ծերութեան այս որդեգրեալ աղջկունքը՝ իրեն համար ամենէն աւելի չքնաղ և սիրուն բաներն էին: Արդէն խիստ քիչ ներողամիտ ըլլալով իրեն պատիւը մոռցողին, ալ աւելի կը զայրանար այն կոշտ և անոպայ մարդուն որ իր թագուհոյն Լոնկվիլ տիկնոջ պատուոյն կը գաշէր: Քաղցը էր իրեն այն վայելչադէմ պատկերները չորս կողմն առնելը. ինչ գնով որ ըլլար կը զնէր զիրենք, միայն թէ գեղեցիկ ըլլային: Իր տանը և գրանոցին պատուականագոյն զարդն ասոնք էին, թէպէտ և ամենէն աւելի փափուկ ախորժակ ունեցող մատենակը, չունէր իրեն գրոցն հաւասար ըն-

տիր և գոյզնագիւտ հաւաքածոյ մը :
Գուղէն շատ շուտ մեռաւ և այն ալ
յանկարծակի կաթուածով գան (Can-
nes) քաղաքը, ուր կը զբօսնոյր իրեն
ուղեկցին Պ. Մէրիմէի ընկերութեամ-
բը . գլութէ նոյն օրուան նոյն ժամուն
կը վախճանէր նաև ինկը նկարիչը 'ի
բարիզ, տարւոյս յունուարի 14ին : ի-
րաւացի փառասիրութիւն և սաստիկ
փափաք ունենալով հասարակաց ուշա-
դրութիւնը միայն իրեն քաշելու, ան-
շուշտ թէ որ խորհուրդ հարցընէին բա-
ցարձակապէս պիտի հրաժարէր պատ-
կերահանին հետ միատեղ աշխարհքիս
մնաս բարով ըսելէն : ինչուան վերջին
ժամը, ինչպէս կ'աւանդէ մահուանն
ականատես հաւատարիմ վկայ մը, իւր
բժիշկներէն մէկը, անայլայլակ պահեց
մտքին լրութիւնը, ոյժը և թափը . քնա-
նալով մեռաւ առանց կռուելու, առանց
տանջուելու, առանց երկայն և ցաւա-
զին հոգեվարք ունենալու, ինչպէս շատ
անգամ փափաքած էր, և նոյն իսկ մա-
հը չկրցաւ եղծանել իր դէմքին պերճ
և զօրաւոր գեղեցկութիւնը : Դեռ կըր-
նար պատմել աղուոր կրքեր, 'ի լոյս հա-
նել մեծամեծ զայրոյթներ, և երազած
թշնամիներուն ետևէն իյնալ : Խելացի
և արդար մարդ մը չէր կրնար ատել
զգութէն . ընդհակառակն իւրաքանչիւր
ոք ակնածութեամբ և պատկառանօք
մտիկ կ'ընէր ըսածներուն : Ճարտարնե-
րէն ոմանկը կ'ախորժէին զինքը զրգը-
ռել, ինչպէս մէկը վառարանի մը նրշ-
դարւոյ կամ կաղնւոյ շերտը կը խառ-
նէ կայծեր ցատքեցընելու համար : Որ-
չափոր ալ չարաճճի ըլլար սակայն լաւ
մարդ էր . մեծ տղայ մ'էր, ինչպէս էր
նաև աննման արհեստաւոր մը . հան-
ճարոյն ամէն կիրքերն ունէր և մտաց
ալ ամէն քմազարդ հաճութիւնները .
երբեմն անտանելի կ'երենար, բայց եր-
բոր լոէր՝ նորէն ամէնքը կ'աղաչէին որ
խօսի : Շատերը ամբաստանած են զին-
քը իրբե խիստ և ագահ . ստոյգ է որ
ինքն իրեն վրայ խիստ էր, միտքը կը
յոզնեցընէր անհանդիսաւ աշխատու-
թեամբ . ստոյիկեան սակաւապիտութիւ-

մը կը վարէր, չէր ճանչնար զեղսու-
թեան և շուայրութեան ինչ ըլլալը, կե-
նաց զիւրութիւններէն անգամ կը խոր-
շէր, և չէր զգար Սորբոնի սենեակնե-
րուն գէճ և ցուրտ նսեմութիւնը, զորոնք
կարծէր թէ կը տաքցընէր և կը լուսա-
ւորէրիր անշինանելի ներքին կրակովը :
Աս աստիճանի ինքն իրեն հետ խըս-
տութիւն բանեցընելով՝ զարմանք է որ
շատ անգամ ուրիշներու հետ ալ խըս-
տութեամբ երթար : Բայց թէ ագահ
եղած ըլլար՝ բաւականապէս կրնան հա-
կառակը վկայել բարոյական և քաղա-
քական զիտութեանց ճեմարանին մէջ
մրցանակ մը հիմնելը, որ տէրութեան
մրցանակներուն կրկնապատիկն է . իր
ծակովովը Պրոկլոսի և Ապէլարի գործ-
քերուն փառաւոր տպագրութիւն մը
հրատարակելը, և դարձեալ իրեն ընչիւ-
քը ճոխ մատենագարան մը հաստա-
տելը, յորում ապահովապէս կը գըտ-
նուէին ուրիշ տեղ չգտնուած գիրքե-
րը, և զոր կատակաւ տէրութեան թո-
ղուց, հանդերձ թոշակով մը գրապե-
տին համար : Արդեօք իրեն ամբաստան-
ներն այսչափ բարիք ըրած են :

Ոչ միայն Գաղղիա սգացաւ իրեն
մահը այլ և համօրէն ուսումնական և
գիտնական աշխարհք . վամն զի մե-
ծահանճար անձինք ընդհանուր մարդ-
կային ցեղին կը վերաբերին և ամէն աղ-
գէ են . փիլիսոփայութիւնը կորսընցուց
Գուղէնով մարդուս խղճմնանքը ա-
մենէն աւելի տագնապեցընող և նոր
ճամբու մը առաջնորդ վարժապետը .
քառամիջոց Ճեմարանը իրեն անդամնե-
րէն ամենէն աւելի պատկառելին, ո-
րուն նմանը քիչ անգամ ընդունած էր
իւր ծոցը, և որուն գլուխը ոչ միայն ին-
քը պատկեր էր անթառամ դափնինե-
րով, այլ և քաղաքական վարչութիւ-
նը արժանապէս վարձատրած էր զինքը
անուանելով պաշտօնեայ հասարակաց
կրթութեան, արքունի խորհրդական,
Ռէր (Pair) Գաղղիոյ և վերջապէս Լէ-
գէոն պատույ կարգին հրամանատար :
Յուղարկաւորութէն հանդիսին խուռն
դիմեցին բարիզ գտնուող ամէն տե-

սակ կարծիքէ ու աստիճանէ մեծամեծ մարդիկ, մասնաւորապէս ճեմականաց շատերը, ծերակուտի անդամներ և նըւլիրակներ, պաշտօնեայք և պաշտօնատեալք, այլ և այլ ուսումնական ժողովոց և վարժոցաց ներկայացուցիչք թիէր, բաղէն, Պէոփէ, Նիզառ, տը Պրոկլի, Բրէվոյ-Բարատոլ, Պարոն Տիւրիւի՝ հասարակաց կրթութեան պաշտօնեայն, Վայեան մարաջախտը և Շանկառնիէ զօրավարը, Լուտ կլէտրուղըն որ բարեկամ էր վախճանելոյն, և այլն և այլն։ Թաղման օրը Գուգէնի գերեզմանին վրայ խօսուեցան երկու փոքրիկ ճառեր ։ որոնցմէ առաջինն արտասանեց Պ. տը Ասսի յանուն Գաղղիոյ ձեմարանին ։ իսկ երկրորդը Պ. Բաղէն յանուն Դավրութեանց Վարժոցին ։ Պ. տը Ասսի այսպէս կը լմբնցընէր իր ճառը. « Ոչ. այն մարդը որ դեռ երէկ կը գրէր այս էջերս որ լի են յԱստուած վստահութեամբ և մեր բնութեանը անմահական վիճակի մը յուսով, բոլորովին մեռած չէ ։ Աչուընուս տակ տխուր զիակ մ'ունինք, բայց մարդն ոչ է անդ ։ Գուգէն կ'ապրի իւր գրուածքներուն մէջ, կ'ապրի այն ազնուական շարժմանը մէջ զոր տուաւ մեր դարուն փիլիսոփայութեանը ։ իր անունը որ միացած է Ցէգարդի, Մալպրանշի, Լայպնիցի անուններուն հետ՝ չկրնար կորսուիլ, պիտի չկորառի ։ Գուգէն կ'ապրի բարեկամներուն սիրտը, երկու ձեմարաններուն յիշատակաց մէջ որ իրենց փառք կը համարէին իրեն անդամակցութիւնքը՝ օր պիտի գայ որ իրենք ալ պիտի մեռնին ։ և եթէ ուրիշ անմահութիւն մը չըլլար՝ ոչ ինչ էր. փառաց ունայնութեամբն հանդերձ մեր վախճանը մահ պիտի ըլլար ։ Գուգէն կը հաւատար ճշմարիտ անմահութեան, որուն պերճախօս և համոզուած առաքեալն եղաւ իր ամբողջ կենացը մէջ. իրեն յոյսը պարապ պիտի չելլայ ։ Վերջին անդամ մ'ալ ողջունենք իր մարմինը. իսկ հոգին՝ առ Աստուծոյ պիտի գտնանք » :

Գուգէնի փիլիսոփայական և մատենագրական ոճոյն ազգայնոց ճաշակ մը տալու համար, հետագայ թերթերէն մէկուն մէջ կը թարգմանենք իր Յաղագս ձշմարտին, Գեղեցկին և Բարույն գրքէն այն գլուխը յորում կը խօսի Ժէդարուն մէջ գաղղիական արուետին վրայ ։

ՄԵԾԱՄԵԾ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Կորիլլոյ կապիկը.

(Տես Էջ 148:)

Որսորդութեան ուրիշ դիպուածներ ։ Առաւօտ մըն էր. գիշերը սոսկալի անցեր էր. զարհուրելի մրրիկ մը մարեր էր բանակետղին կրակները և նեղեր էր մեր ճամբորդները ։ Կորիլլոյին աղաղակը լսուեցաւ, և մէկէն Պ. տիւ Շայլիւ սրտոտեցաւ ։ Խմեց թաս մը խահուէ և պաքսամատ մը կերաւ և ոչինչ աւելի, վասն զի կերակուրը քիչ էր, ու գնաց ։

Հազիւ մղոնի չորրորդ մասը ըրեր էին՝ գարձեալ նոր մանշիւն մը լսուեցաւ ։ կենդանին հեռու չէր, և ճամբուն մացառներուն ծռելէն կ'իմացուէր գաղանին մօտենալը ։ Որսորդները կանկառին և լուռ կեցան, վախնալով որ չկատղեցնեն ։ աւելորդ զգուշութիւն մըն էր այս ։ Կորիլլոն զիրենք տեսնալուն պէս ճեղքեց մացառները, երկու ոտքերուն վրայ ելաւ կանգուն կեցաւ, քանի մը քայլ առաւ, կայնեցաւ, նըստաւ, հնչեցուց իր լայն կուրծքը բռնցի հարուածներով ։ այլ գարձեալ վեր ելաւ կայնեցաւ, քանի մը քայլ ըրաւ, գարձեալ կեցաւ բացաւ անձաւանման բերանը և մռնչեց ։

Երբոր տասը քայլ հեռաւորութեամբ մօտեցեր էր՝ Պ. տիւ Շայլիւ յարմարժամանակ սեպեց ։ հարուածը ճիշդ կուրծքը ինչեցուց և երեսն ՚ի վայր գետին փոեց ։ « Այս կենդանիները, կը